ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (374281) 2 25 22**

,, _____,, ,,_____,, 2019թ N _____ **Ֆաքս (374010) 28 18 32**

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ
/Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59/

Հարգելի պարոն Սաքունց

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետի 18.06.2019թ. N 14/14.7/30137-2019 գրության և ի պատասխան ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 18.06.2019թ. գրության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Էդիկ Գրիգորյանի բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ խնդիրը բազմիցս ուսումնասիրվել և քննարկվել է մարզպետարանում:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ 1992թ. ռազմական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժի կողմից կատարած հրետակոծությունների հետևանքով Խաչիկ բնակավայրում վնասվել է թվով 66 բնակելի տուն, սակայն ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 25-ի թիվ 343 որոշմամբ ֆինանսական աջակցություն տրամադրվել է 4 տնտեսության: Է. Գրիգորյանի առանձնատունը նույնպես ենթարկվել է ռմբակոծության, որից առանձնատան տեխնիկական վիճակի փոփոխություն չի առաջացել: 2004թ. «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում Է. Գրիգորյանի առանձնատանը տրվել է 4-րդ կարգի վթարայնության աստիճան:

Միաժամանակ հայտնում ենք, որ մարզում առկա գրանցված 228 IV-րդ կարգի վթարային աստիճան ունեցող շենքերի ցանկը ներառված է մարզի միջնաժամկետ ծախսային ծրագրում, որտեղ ընդգրկված է նաև Է. Գրիգորյանի առանձնատունը:

Недействительная подпись

X

ՏՐԴԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: SARGSYAN TRDAT 2901890687 **Տ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Ա. Հովսեփյան
Հեռ.0281-2-55-04